Այբ կրթական հիմնադրամ

Ստեղծելով ապագա

«ԱՅԲ»-Ը 15 ՏԱՐԵԿԱՆ Է

Մեր ուժը մեր համայնքն է

Մեր փիլիսոփայությունը

Կրթությամբ վերափոխել
մարդկային կյանքը և մեր երկրի ապագան

Մեր նպատակը

Ձևավորել սովորելու գերազանցության մշակույթ և համակարգված ներդրումներով աջակցել հայկական կրթության զարգացմանը

Մեր առաքելությունը

Ստեղծել և բազմապատկել օրինակելի
կրթական միջավայրեր, հայկական կրթության
լավագույն մոդելը դարձնել
ողջ աշխարհում մրցունակ և ճանաչելի

Մեր տեսլականը

- **Սահմանել** որակյալ կրթության նոր նշաձող
- **Զարգացնել** ու արտահանել ազգային հենքով կրթական նորարար մոդել
- **Հասնել** կրթության ոլորտում համակարգային և որակական փոփոխությունների
- **Կրթել** 21-րդ դարի մրցունակ և ստեղծարար սերունդ

15 տարվա ընթացքում «Այբ»-ը բազմաթիվ կրթական նորարարական ծրագրեր է կյանքի կոչել, որոնց ազդեցությունը միայն թվերով չափելի չէ. այն բազմապատիկ տարածվել է և այսօր էլ նոր պտուղներ է բերում մեզ բոլորիս:

«Այբ» համակարգի երեք կառույցները կրթական ծրագրերի իրականացմանն ուղղել են **շուրջ 35 մլն դոլար**

Մեր դպրոցական ծրագրերում ներգրավված է

միջինը 850 դպրոց՝
դպրոցների շուրջ 60%-ը

125 000 երեխա՝
սովորողների շուրջ 30%-ը

Մեր դպրոցական մրցույթներում

729 000 մասնակից

15 տարիների ընթացքում

Մեր ծրագրերի շուրջ
ձևավորված ուսուցչական համայնք

9000+ ուսուցիչ

Մեր շուրջ համախմբված
բարերարների համայնք

600+ բարերար

ներկայումս վարչական աշխատանքներին ուղղվում է ֆինանսական միջոցների 11%-ը

Հիմնադրամների համար այս ցուցանիշը
ողջ աշխարհում 15-40% է,
իսկ մինչև 20%-ը համարվում է լավագույն ցուցանիշ:

«ԱՅԲ»-Ի ՍՏԵՂԾՈՒՄԸ՝ ԳԱՂԱՓԱՐԻՑ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2006 թ. կրթության շնորհիվ հաջողության հասած ութ երիտասարդներ որոշեցին հիմնել «Այբ» կրթական հիմնադրամը՝ իրականացնելու երկիրը կրթությամբ վերափոխելու իրենց երազանքն ու գաղափարը:

Մի քանի գաղափարակիցների սկսած գործն այսօր Հայաստանում և նրա սահմաններից դուրս վերածվել է կրթական հզոր շարժման: Որակյալ կրթության այցեքարտ դարձած «Այբ» անունն այսօր իր շուրջ համախմբել է բազմաթիվ նվիրյալ մարդկանց ու գործընկերների:

Արդեն 15 տարի է՝ մենք ստեղծում ենք իրական կրթական հնարավորություններ, տարածում մոտեցումներ ու արժեքներ, որոնք, համոզված ենք, մեր երկրի զարգացման կարևոր նախադրյալներ են:

«ԱՅԲ»-Ը՝
ՀԱՄԱՅՆՔ

Մեր ուժը մեր համայնքն է.

սա է հաջողության հասնելու մեր բանաձևը

«Այբ»-ը նվիրյալ մարդիկ են, որոնք ստանձնել են կրթության ոլորտում համակարգային փոփոխություններ իրականացնելու պատասխանատվություն՝ այդպես նպաստելու մեր պետության հզորացմանը:

2007 թ.-ին որպես ոչ պաշտոնական հասարակական կազմակերպություն հիմնվեց «Այբ» ակումբը՝ միավորելով աշխարհի տարբեր անկյուններից ավելի քան 40 անդամների և սկիզբ դնելով մեր այսօրվա մեծ համայնքի ձևավորմանը:

Մեր բարերարների թիվն արդեն անցնում է 600-ից: Մեր մեծ համայնքը 15 տարվա ընթացքում մասնագիտական, ֆինանսական և ժամանակային մեծ ներդրում է կատարել կրթության զարգացման նպատակով՝ դառնալով պետության համար հենարան ու աջակից:

Կառավարում և կառուցվածք

Այբական գաղափարների իրականացման և դրանց ազդեցության մեծացման գործառույթը կատարում է հիմնադրամի թիմը, իսկ կառավարման բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: Այն ձևավորվում է ներհամայնքային ընտրության միջոցով՝ մասնակցային մոդելով, և գործում երկու տարի:

«ԱՅԲ»-Ի
ԵՐԵՔ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

«Այբ» դպրոց

Համայնքային դպրոց՝
սոցիալական խոշոր բաղադրիչով

Դիլիջանի կենտրոնական դպրոց

Մարզային դպրոց՝ Կենտրոնական բանկի հետ
համագործակցությամբ ստեղծված

Ազգային երգ ու պարի ակադեմիա

Հիմնադրամ, որը հասանելի է դարձնում
ազգային մշակույթը բոլորին

ՃԱՆԱՉԵՔ «ԱՅԲ»-Ը
ՄԵՐ ԾՐԱԳՐԵՐՈՎ

Այբ
հիբրիդային կրթություն

«Այբ» հիբրիդային կրթություն

Ապագայի կրթությունն այսօր

Սա մեր 15-ամյակի նվերն է հանրությանը և անվճար կրթության բացառիկ հնարավորություն, որը միավորում է այբական երկու կարևոր բաղադրիչ՝
կրթությունն ու արժեքները:

Միջազգայնորեն մրցունակ և համապարփակ այս ծրագիրը, որ մեկնարկել է 2021 թ.-ին, մեր ռազմավարական ու հեռանկարային ծրագրերից է և նպատակ ունի Արարատյան բակալավրիատը հասանելի դարձնել Հայաստանի Հանրապետության և Արցախի բոլոր աշակերտներին: 2022 թվականի ամռանն այն նախատեսվում է գործարկել նաև սփյուռքում:

Ծրագրին այս փուլում մասնակցում են ՀՀ և Արցախի հանրակրթական դպրոցների 10-րդ դասարանցիները, որոնք մեկուկես տարվա ընթացքում բնագիտական որևէ առարկայից կիրառական կամ հետազոտական նախագծեր կյանքի կկոչեն՝ տվյալ ոլորտի առաջատար կազմակերպությունների ու անհատների առաջնորդությամբ:

Առաջին փուլում ընդունված աշակերտներ

66

- մարզեր և Արցախ **43**
- երևան **23**

«ԱյԲ» հիբրիդային կրթությունը

նախագծահեն ու արժեքահեն կրթության մոդել է, որը տալիս է՝

- ողջ աշխարհում մրցունակ կրթություն, գիտության (առարկաների) հանդեպ հետաքրքրություն,
- մասնագիտական ճիշտ կողմնորոշում, աշխատաշուկայում պահանջված «փափուկ» հմտություններ,
- տեսական գիտելիքներն իրական նախագծերի վերածելու հմտություն,
- նախագծային մտածողություն և նախագծերի կառավարում,
- ընտրված բնագիտական առարկան խորությամբ ուսումնասիրելու հնարավորություն,
- ծրագրի ավարտին՝ միջազգային հավաստագիր:

Արարատյան բակալավրիատ

Աշխարհի լավագույն համալսարաններում
մեր այցեքարտը

Արարատյան բակալավրիատը (ԱԲ) 2014 թվականին Քեմբրիջի համալսարանի և Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթության ինստիտուտի հետ գործընկերությամբ ստեղծված միջազգայնորեն մրցունակ և հայալեզու դպրոցական ծրագիր է, որն ունի միջազգային ճանաչում:

ԱԲ-ի հավաստագիրը ճանաչող հեղինակավոր համալսարաններ 125

2014 թ. մեկնարկեց Կրթության գերազանցության ազգային տասնամյա ծրագիրը (ԿԳԱԾ), որի իրականացման հիմնական գործիքն Արարատյան բակալավրիատն էր և որը նպատակ ուներ ԱԲ-ը փուլերով ներդնելու ՀՀ և Արցախի բոլոր ավագ դպրոցներում՝ նոր որակ հաղորդելով կրթությանը: ԿԳԱԾ-ն իրականացվելու դեպքում ներառելու էր 20 000 ուսուցիչ, որը Հայաստանի ուսուցչական համայնքի կեսից ավելին է:

Ուսուցիչների վերապատրաստումների ու հավաստագրման առաջին ծրագիրը հաջողությամբ իրականացվեց, ԿԳԱԾ-ի առաջին փուլի մարզային դպրոցներն արդեն պատրաստ էին ծրագրի ներդրմանը, սակայն 2018 թ. կրթության ու գիտության նախարարությունն առանց հիմնավորման դադարեցրեց ԿԳԱԾ-ը: Չնայած ծրագիրը հանրակրթական դպրոցներում ներդնելու աշխատանքների դադարեցմանը՝ «Այբ» կրթական հիմնադրամի առաջնահերթություններից մեկը շարունակում է մնալ վերապատրաստված ուսուցիչների հմտությունների շարունակական զարգացումը:

Հիմնադրամը նաև իր բարերարների ջանքերով ապահովում է ԱԲ-ի քննական կենտրոնի գործունեությունը՝ հայ երեխաներին հնարավորություն տալով Հայաստանում ու հայերենով ստանալու միջազգային ճանաչման դիպլոմ: Այսօր ԱԲ ծրագիրը դասավանդվում է միայն «Այբ» ավագ դպրոցում, սակայն նոր շարունակություն է ստացել հիմնադրամի նոր՝ «Այբ հիբրիդային կրթություն» ծրագրի միջոցով:

2016 թ. Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության ազգային գործակալությունը (UK NARIC) համաքննեց ԱԲ-ի ծրագիրը և այն համազոր ճանաչեց բրիտանական GCE A Level և ամերիկյան Advanced Placement խորացված մակարդակի դպրոցական որակավորումներին:

Վերապատրաստումներ Տավուշի մարզում

Որպես ուսուցիչների հետ աշխատանքի մեծ փորձ ունեցող առաջատար կառույց՝ «Այբ»-ը ստանձնել է 2021-ի օգոստոսից մինչև 2022-ի մայիս վերապատրաստել Տավուշի մարզի բոլոր 82 դպրոցների 160 տնօրեններին, փոխտնօրեններին և բնագիտամաթեմատիկական առարկաներ դասավանդող 600 ուսուցիչներին՝ Տավուշի մարզի ուսումնական հաստատություններում հանրակրթության պետական չափորոշչի փորձարարական ներդրման ծրագրի շրջանակում:

Կարողությունների զարգացմանն ուղղված այս խոշոր ծրագրով ընթանում են հագեցած աշխատանքներ մի քանի բաղադրիչով՝ մանկավարժական վերապատրաստում, առարկայական ու գործնական վերապատրաստում և մենտորություն՝ ուսուցիչներին փոխանցելով դասավանդման ամենավերջին մոտեցումներն ու մոդելները:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Համաշխարհային բանկի գործընկերային ծրագրի՝ «Եվրամիությունը հանուն նորարարության» նախաձեռնության հետ համագործակցությամբ:

Ծրագիրը նպատակ ունի հանրակրթության նոր չափորոշիչների ներդրման Տավուշի հաջողված փորձը հետագայում տարածել մյուս բոլոր մարզերում ու մայրաքաղաքում:

Կյանքի հիմնարար հմտություններ դեռահասների համար

Հայաստանի բազմաթիվ դեռահասներ ծանոթացան կյանքի հիմնարար հմտություններին՝ «Այբ» հիմնադրամի և «ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի» համատեղ իրականացրած ծրագրի շնորհիվ: Այս հմտություններն առավել ստրեսակայուն, ուժեղ, նպատակասլաց սերունդ ունենալու նախապայմանն են և համավարակի ու հետպատերազմյան իրականության պայմաններում՝ խիստ արդիական:

2021-ի տարեսկզբին մեկնարկած այս կարևոր ծրագիրը, որը նախատեսված է մինչև 17 տարեկան երեխաների համար, նպատակ ունի նպաստելու նրանց կարողությունների զարգացմանը և տրամադրելու անհրաժեշտ հիմնարար ուսումնական գործիքներ որակյալ ապագայի և կյանքի ձևավորման համար:

Ծրագիրն իրականացվել է Տավուշի, Գեղարքունիքի, Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, ինչպես նաև Երևան և Աշտարակ քաղաքներում:

Ծրագրում ներգրավվել են

- դեռահասներ **850**
- մարզային մասնագետներ **135**

«Այբ» հիմնադրամն այս ծրագրով այցելել է Հայաստանի 9 մարզի 22 համայնքների գրեթե բոլոր ավագ դպրոցներ և կրթական հասարակական կազմակերպություններ: Ծրագիրն անցկացվել է երկու փուլով, որոնցից վերջինը՝ Ճապոնիայի դեսպանատան հովանավորությամբ:

Զանգվածային դպրոցական մրցույթներ

Այբական մրցույթների շնորհիվ մեր դպրոցականները զարգացնում են իրենց առարկայական հմտություններն ու գիտելիքները և ձգտում նոր նվաճումների: Հաճախ հենց մրցույթներն են նպաստում գիտելիքի և կրթության հանդեպ երեխաների հետաքրքրության աճին:

ԿԵՆԳՈՒՐՈՒ

2008 թ. Հայաստանն անցկացրեց առաջին «Կենգուրու» մրցույթը՝ սկիզբ դնելով մաթեմատիկական մեծ շարժման ու ապահովելով մրցույթում աննախադեպ մասնակցություն: Սա հայաստանյան հանրակրթության ոլորտում անցկացվող ամենասիրված զանգվածային մրցույթն է: «Կենգուրուով» տրվեց միջազգային ճանաչված դպրոցական մրցույթների ներկայացման և ապա նաև տեղական նմանատիպ զանգվածային մրցույթների ստեղծման ու հանրայնացման գործընթացի մեկնարկը Հայաստանի Հանրապետությունում և Արցախում:

2010 թ. Հայաստանում առաջին անգամ պաշտոնապես անցկացվեց «Ռուսական արջուկ» մրցույթը: «Կենգուրուից» հետո սա երկրորդ միջազգային դպրոցական մրցույթն էր, որ «Այբ»-ը բերեց ՀՀ ու Արցախ և հայ երեխաներին դարձրեց մեծ համայնքի մաս՝ միաժամանակ զարգացնելով լեզուների իմացության գաղափարը:

ՄԵՂՈՒ

2014 թ. առաջին անգամ ՀՀ-ում և Արցախում անցկացվեց «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթը՝ ռեկորդային թվով մասնակիցներով՝ գրեթե 45 000: «Մեղու» մրցույթով «Այբ»-ը առաջինը ստեղծեց հայերենի զանգվածային մրցույթի որակյալ ու հաջողված բովանդակություն: 2019 թվականից այն անցկացվում է նաև սփյուռքում՝ գրագետ հայերեն տարածելու մեր ջանքերին տալով նաև հայապահպանման նշանակություն: Այսօր այս մրցույթը միավորում է աշխարհի ամենատարբեր անկյունների հայ երեխաներին:

Կրթական շարժումը՝ թվերով

Մրցույթների մասնակիցների թիվը 2008-ից ի վեր

729 000+
մասնակիցներ դպրոցական բոլոր մրցույթներում

432 000+
կենգուրու

75 000+
Ռուսական արջուկ

222 000+
Մեղու

«Այբ»-ը զանգվածային մրցույթների՝ 13 տարիների ընթացքում կուտակած տվյալների հիման վրա ստեղծել է կրթական հետազոտական առցանց հարթակ: Սա տեղեկատվական մեծ շտեմարան է, որը կրթության ոլորտում հետազոտությունների ու վերլուծությունների լայն հնարավորություն է տալիս ցանկացած փորձագետի կամ կազմակերպության:

Թիմային մրցույթներ

Թիմային մրցույթների միջոցով դպրոցականներն ու երիտասարդները համախմբվում են իրենց հետաքրքրությունների շուրջ, հաճախ հենց դրա հիման վրա ընտրում մասնագիտություն կամ գիտության ճյուղ, իսկ հետագայում ձևավորում մասնագիտական կուռ համայնք: Մեր թիմային մրցույթներն առավելապես բնագիտական են և շատ մեծ ազդեցություն ունեն դեռևս դպրոցում երեխաներին դեպի գիտություն կողմնորոշելու հարցում:

Պատանի
քիմիկոսների
մրցաշար

2010 թ. Հայաստանում առաջին անգամ անցկացվեց Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարը քիմիայի սիրահար դպրոցականների համար: Այն «Այբ»-ի ստեղծած առաջին հայաստանյան թիմային մրցույթն է դպրոցականների համար և նրանց հնարավորություն է տալիս ստանալու գիտական բանավեճերի ու հետազոտությունների իրենց առաջին փորձը: Պատանիները նաև հնարավորություն են ստանում մեր երկիրը ներկայացնելու ավելի մեծ՝ համաուկրաինական մրցաշարում:

2020 թ. մրցույթը տրամաբանական շարունակություն ստացավ՝ տեղափոխվելով բուհական համակարգ, ինչը շատ կարևոր էր շղթան ամբողջացնելու և մեր նախագծի միջոցով գիտություն–գործատու համագործակցության համար ուղիղ կապ ստեղծելու համար:

Այսօր արդեն ունենք տարբեր սերունդների ներուժը համատեղած քիմիկոսների մեծ համայնք:

WRO™
WORLD ROBOT OLYMPIAD

2014 թ. «Այբ»-ը դարձավ Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի (World Robot Olympiad) հայաստանյան ներկայացուցիչը և ազգային փուլի պաշտոնական կազմակերպիչը մեր երկրում:

2016 թ. առաջին անգամ Հայաստանում անցկացվեց ռոբոտաշինության ամենաճանաչված դպրոցական այս մրցույթի ազգային փուլը:

Սա մեր այցեքարտն է տեխնոլոգիական ժամանակակից աշխարհում և ոչ միայն զարգացնում է մեր երեխաների ստեղծարար միտքը, այլև նրանց հնարավորություն տալիս մեր երկիրն ամեն տարի ներկայացնելու ամենահեղինակավոր ու համաշխարհային այս օլիմպիադայում:

ԼԵԳՈՍՏԱՐՏ

2021 թ. առաջին անգամ կայացավ սկսնակների համար նախատեսված «Լեգոստարտ» մրցույթը, որը լավ սկիզբ էր հատկապես մարզային սկսնակ թիմերի համար՝ պատրաստվելու Ռոբոտների համաշխարհային օլիմպիադային:

11 թիմ ստացավ կարողությունները զարգացնելու և ավելի փորձառու միջավայրում ուժերը չափելու հնարավորություն:

Պատանի քիմիկոսների մրցաշար

2010-ից ի վեր

- 299 թիմ
- 1447 աշակերտ
- 280+ ուսուցիչ

Ուսանող քիմիկոսների մրցաշար

2020-ից ի վեր

- 10 թիմ
- 45 մասնակից

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա

2016-ից ի վեր

- 74 թիմ
- 210 մասնակից

Լեգոստարտ

2021-ից ի վեր

- 11 թիմ
- 33 մասնակից

Khan Academy Armenia

«Քան» ակադեմիա

Կրթություն ամենքի համար և ամենուրեք

Ուսման անհավասար պայմանները վերացնելու նպատակով՝ 2017 թ.-ից «Այբ» կրթական հիմնադրամի նախաձեռնությամբ տեղայնացվում են աշխարհի ամենամրցունակ ու որակյալ կրթական հարթակներից մեկի՝ միջազգային «Քան» ակադեմիայի նյութերը:
«Քան» ակադեմիայի հայերեն կայքն առաջարկում է վարժություններ, հոդվածներ, ուսուցողական տեսանյութեր: Այն անհատական ուսուցողական հարթակ է, որտեղ սովորողն ինքն է պլանավորում իր ուսումը: «Քան» ակադեմիայի հայերեն տեղայնացված տարբերակը հնարավորություն է տալիս մեր հազարավոր երեխաներին և ուսուցիչներին անվճար օգտվելու կրթության աշխարհի հարուստ և ժամանակակից նյութերից:

«Քան» ակադեմիայի հնարավորությունները

- Անհատականացված ուսում.
  սովորողներն առաջ են շարժվում իրենց հարմար արագությամբ
- Վստահելի նյութեր, որոնք մշտապես անվճար են
  սովորողների և ուսուցիչների համար
- Ուսուցիչներին աջակցելու գործիքներ,
  որոնցով ուսուցիչները բացահայտում են սովորողների
  բացթողումները և կիրառում անհատականացված մոտեցում

Համավարակի ու կրթական համակարգի փոփոխության պայմաններում «Քան» ակադեմիան առաջիններից էր, որ օգնության հասավ ուսուցիչներին և աշակերտներին՝ առցանց հարթակում գրանցելով աննախադեպ՝ 200%-ով ավելի շատ օգտատեր:

«Քան» ակադեմիան Հայաստանում

Անվճար ու հայերենով այժմ հասանելի են մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն առարկաների կրթական տեսանյութեր ու վարժություններ, որոնք համապատասխանեցված են դպրոցական ծրագրերին, ինչպես նաև ձեռներեցության, մշակույթի ու արվեստի, անգլերենի, երաժշտության, SAT քննությունների բաժինները: Ներկայումս համալրվում են նոր բաժիններ՝ ֆինանսական գրագիտության ու համակարգչային գիտության:

Տեղայնացմանը զուգահեռ «Քան» ակադեմիան, որն ունի հատուկ բաժին մանկավարժների համար, թիրախավորված աշխատարանների շարք է կազմակերպում ուսուցիչների և սովորողների համար (միայն վերջին տարում մասնակցել են ավելի քան 1000 աշակերտ և 300 ուսուցիչ): Աշխատարանների այս շարքը սկսվել է ամենահեռավոր ու սահմանամերձ համայնքներից:

Հարթակի այցելություններ

2017-ից ի վեր

720 000

Օգտատերեր

2022-ի դրությամբ

63 013

(23% աճ նախորդ տարվա համեմատ)

Սովորողներ

47 583

Ուսուցիչներ

11 100

Ծնողներ

4330

Յություբյան ալիքի բաժանորդներ

13 400

Դիտումներ YouTube-ում

1,9+ մլն

Հարթակում սովորելու րոպեներ

35 000+

Հարթակից օրական օգտվողների միջին թիվ

670

Բնագիտական առարկաների ուսուցիչների Ֆեյսբուքյան համայնքի անդամներ

3000

«Այբ» կրթական հանգույց

Հայաստանում առաջին դպրոցական ավանը

«Այբ» կրթական հանգույցը «Այբ» կրթական հիմնադրամի կարևոր ու խոշոր ծրագրերից է: Այստեղ յուրաքանչյուր տարր ունի կրթությանն առնչվող բովանդակություն և միաժամանակ նպաստում է մանկավարժության, գիտության, արվեստի, գործարարության և հասարակական կյանքի այլ ոլորտների ներդաշնակ գոյակցությանը: Նախագծված են ավանի բոլոր ենթակառուցվածքները՝ դպրոց, գիտության ու տեխնոլոգիայի կենտրոն, ֆաբլաբ, Սրբոց Թարգմանչաց եկեղեցի ու համայնքային կենտրոն, մանկապարտեզ, սպորտային համալիր, հանրակացարաններ, կանաչապատ տարածքներ, որոնց մի մասն արդեն կյանքի է կոչվել:

«Այբ» կրթական հանգույցի յուրօրինակ լուծումները «Ստորակետ» ճարտարապետական արվեստանոցի հայ ճարտարապետների և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ու Հարվարդի համալսարանի առաջատար մասնագետների ու գիտնականների համատեղ աշխատանքի արդյունք են:

«Այբ» դպրոց

Դպրոցը բացվել է 2011 թվականին և արդեն 10 տարեկան է: Համայնքային այս դպրոցը ոչ միայն գիտելիքներ ու հմտություններ փոխանցող հաստատություն է, այլև հասարակական կյանքին ակտիվ մասնակցող կառույց:

$ 8,8 մլն դոլար

«Այբ» դպրոցի երեք մասնաշենքերի շինարարության համար

«Այբ» դպրոցի ուսուցման մեթոդաբանության կարևոր բաղադրիչ է նախագծային ուսումնառությունը, որով բոլոր աշակերտները ներգրավվում են առօրյա կյանքում իրականացվող տարբեր նախագծերում՝ գործնականորեն ստուգելով ու կիրառելով իրենց գիտելիքները, զարգացնելով հաղորդակցման, թիմային աշխատանքի հմտությունները և կողմնորոշվելով ապագա մասնագիտության ընտրության հարցում: Սոցիալական պատասխանատվության ձևավորման համար մեծ նշանակություն ունի համայնքային ծառայության ժամը, երբ երեխաները կատարում են հանրօգուտ կամ կամավորական աշխատանք և դարձնում այն կենսակերպ:

Ըստ էության, «Այբ» դպրոցը կրթական լաբորատորիա է, որտեղ նորարարական ծրագրերը հաջող փորձարկելուց հետո այդ հարուստ փորձը նվիրում են հանրակրթության ոլորտին ու շահառուներին: «Այբ»-ում դասավանդումը կատարվում է «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայկական կրթական ծրագրով, որը մշակվել է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից:

Դպրոց

- աշակերտ 478
- շրջանավարտ 419
- ուսուցչական համայնք 110 +

Ուսումը շարունակում են՝

- ՀՀ բուհերում 79%
- արտերկրում 21%

«Այբ» կրթական հիմնադրամի ծրագրերն՝ ուղղված «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդի համալրմանը:

Հայաստանի ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրը

«Այբ» դպրոցի ավագ բաղադրիչը ՀՀ ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է: «Այբ» ավագ դպրոցում կիրառվում է կրթաթոշակային այնպիսի համակարգ, որը թույլ է տալիս տաղանդավոր երեխաներին ընդունվել «Այբ» դպրոց ծնողների ֆինանսական հնարավորություններից անկախ:

«Այբ» հիմնադրամը հայթայթում է ֆոնդեր անհատ բարերարների ու կազմակերպությունների նվիրատվություններից, որպեսզի որևէ աշակերտ, որ ընդունվել է «Այբ» ավագ դպրոց, ֆինանսական պատճառով չզրկվի այստեղ սովորելու հնարավորությունից:

«Այբ» կրթական հիմնադրամի ծրագրերն՝ ուղղված «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդի համալրմանը:

10 տարում

«Այբ» կրթական հիմնադրամը փոխհատուցել է «Այբ» ավագ դպրոցի 490 աշակերտի ուսման վարձ՝

1 158 181 503 ՀՀ դրամ:

Ուսման կրթաթոշակ ստանում է ավագ դպրոցում սովորողների 86%-ը:

«Այբ» կրթական հիմնադրամի ծրագրերն՝ ուղղված «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդի համալրմանը:

Բարի ընթրիք

Կրթաթոշակային ֆոնդի համալրմանն է ուղղված նաև 2017-ից մեկնարկած «Բարի ընթրիք» բարեգործական նախագիծը, որի նպատակը հայ երեխաներին ուսման լավագույն հնարավորություն ստանալու հարցում աջակցելն է՝ անկախ նրանց ընտանիքների ֆինանսական վիճակից:

Հայտնի ու սիրված մարդու հետ ընթրիք–հանդիպման համար կազմակերպված ածուրդի ողջ հասույթն ուղղվում է «Այբ» ավագ դպրոցի աշակերտների ուման վարձին:

2017-2021 թթ. տեղի է ունեցել
60 հանդիպում,
որոնց արդյունքում հանգանակվել է
7 000 000+ ՀՀ դրամ:

Մենտորությունը որպես առաքելություն

«Այբ»-ի մենտորության ծրագրի նպատակը սերունդների փոխօգնության ամուր շղթա ստեղծելն է, արժեքների փոխանցմանը և սերունդների անձնային ու մասնագիտական զարգացմանը նպաստելը: Ծրագրի շրջանակում «Այբ» համայնքի անդամը կամավոր պարտավորություն է ստանձնում հանդես գալու որպես «Այբ» դպրոցի շրջանավարտների մենտոր մինչև նրանց 25 տարին լրանալը:
«Այբ»-ի մենտորների դերում արդեն հանդես են գալիս նաև «Այբ»-ի առաջին սերունդների շրջանավարտները, ովքեր սատարում են կրտսեր շրջանավարտներին մասնագիտական և անձնային աճի բարդ ճանապարհին:

«Այբ»-ի մենտորության ծրագիր

սան 402

2014-2021 թթ. շրջանավարտներ

շրջանավարտ մենտոր 58

բարերար մենտոր 16

Ֆաբլաբ

Կրթություն, որ կիրառական է

Ֆաբլաբը Հայաստանում նորարարական «խելացի» լաբորատորիաների ներդրման բացառիկ, լայնածավալ ազդեցության ծրագիր է, որը թույլ է տալիս կրթությունը դարձնել կիրառական: Ֆաբլաբերը հնարավորություն են տալիս խթանելու գիտահետազոտական աշխատանքները ռոբոտաշինության, ֆիզիկայի, տեխնոլոգիայի, մեքենաշինության և այլ ոլորտներում, ինչպես նաև հետազոտությունների նոր հարթակ են ստեղծում երիտասարդ հայ գիտնականների համար: Սա բաց հարթակ է, որը ծառայում է մի ամբողջ համայնքի:

Միանալով ֆաբլաբերի ցանցին՝ Հայաստանը դարձել է աշխարհի լավագույն տեխնիկական բուհի՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (ՄՏԻ) միջազգային կրթական հսկա ցանցի անդամ և հնարավորություն ստացել օգտվելու այն հմտություններից, գիտելիքից և փորձից, որոնք ստեղծվել են ցանցի անդամ լաբորատորիաներում:

«Այբ» կրթական հիմնադրամը՝

- ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսավորմամբ ձեռք բերեց ՄՏԻ-ից երկու ֆաբլաբի լիցենզիա և սարքավորումներ ԴԿԴ-ի համար,
- ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության ֆինանսավորմամբ կառուցեց Երևանի «Այբ» դպրոցին կից ֆաբլաբը:

Գիտության և տեխնոլոգիայի կենտրոն

Նախատեսվում է, որ այս կենտրոնը պետք է դառնա նոր հարթակ, որը խթանելու է երեխաների ու երիտասարդների՝ գիտության հանդեպ հետաքրքրությունը, փորձարարական գիտությունների ուսումնասիրման գործում փորձերի կատարումը, ուսուցիչների մասնագիտական զարգացումը:

Սրբոց Թարգմանչաց եկեղեցի

«Այբ»-ն այսօր թարգմանչաց նորօրյա շարժման կրողն ու օրինակն է: Ավանում եկեղեցու առկայությունը խորհրդանշում է ճանաչողության ու բարոյական արժեքների կապը: Թարգմանիչների՝ սբ Մեսրոպի, սբ Սահակի և նրանց աշակերտների շարժումը «Այբ» համայնքի համար եղել է մեծագույն օրինակ և ներշնչանքի աղբյուր, և եկեղեցու կառույցը խորհրդանշում է այն մարդկանց, որոնց էական գրավոր ժառանգության վրա խարսխված են հայ ինքնությունը և հոգևոր գիտակցությունը: Եկեղեցին երաշխիքն է ոչ միայն կրթված, այլև բարոյական սերնդի ձևավորման, և դարեր շարունակ հայ եկեղեցին և հայ դպրոցը եղել են կողք կողքի՝ ապահովելով մեր ժողովրդի հոգևոր-ազգային միասնականությունը և ճանաչողական-արժեքային ներդաշնակությունը:

Սրբոց Թարգմանչաց եկեղեցու կառուցման լավագույն ճարտարապետական հայեցակարգի ընտրության նպատակով հայտարարվել է միջազգային բաց մրցույթ, որին մասնակցել է 119 անհատ ճարտարապետ և կազմակերպություն Հայաստանից, Ռուսաստանից, Իսպանիայից, ԱՄՆ-ից, և 50 նախագծերից վերջնական ընտրվել է ճարտարապետ Էրիկ Օհանյանի հեղինակածը: Եկեղեցին կազմված կլինի քարե գրքերից, և ամեն մի գիրք կխորհրդանշի սբ Թարգմանիչներից մեկին:

Ավարտվել է եկեղեցու ներքին և արտաքին բարձրաքանդակների, արձանագրությունների և գեղարվեստական լուծումների՝ շուրջ երկու տարի տևած աշխատանքը: Նախագիծը դրամահավաքի փուլում է՝ այս բացառիկ եկեղեցու շինարարությունը սկսելու համար:

Դիլիջանի կենտրոնական դպրոց

Դիլիջանի կենտրոնական դպրոցն այսօր հանդես է գալիս որպես կրթական տարբեր նախաձեռնությունների կենտրոն ոչ միայն Դիլիջան քաղաքում, այլև ամբողջ մարզում՝ դառնալով ստեղծագործելու եզակի հնարավորություն սովորողների համար, հատկապես որ դպրոցում գործում է նաև ֆաբլաբը՝ կրթական ու գիտական հաստատության համար փորձարկումների ու գաղափարների իրականացման բաց տիրույթ: Դիլիջանի կենտրոնական դպրոցի առաքելությունն է լինել առաջատար և նորարար դպրոց՝ դառնալով օրինակ մարզի մյուս դպրոցների համար:

- ԴԿԴ շրջանավարտներ 80
- ԴԿԴ աշակերտներ 133
  - Երևան 44
  - Դիլիջան 70
  - ՀՀ այլ քաղաքներ 19

Դիլիջանի կենտրոնական դպրոցը բացվել է 2013 թվականին «Այբ» կրթական հիմնադրամի և ՀՀ կենտրոնական բանկի համագործակցությամբ: Այն պատկանում է «Այբ» դպրոցների ընտանիքին և «Այբ»-ի՝ արտաքին պատվերով ու ֆինանսավորմամբ իրականացրած առաջին դպրոցական նախագիծն է: Այս համագործակցության արդյունքում ստեղծվեց քաղաքային դպրոցի մոդել՝ հասանելի ոչ միայն բանկի աշխատակիցների, այլև Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների համար:

Դպրոցում ուսանելու պայմանները նույնն են բոլոր աշակերտների համար. Կենտրոնական բանկը փոխհատուցում է բոլոր աշակերտների ուսման ծախսերը:

ԱյբԼաբ

Ժամանակակից առարկայական լաբորատորիայի մոդել

«Այբ» կրթական հիմնադրամի առաջին լայնածավալ ծրագրերից մեկը տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից առարկայական լաբորատորիաների՝ «ԱյբԼաբ»-երի ստեղծումն ու դրանցում դասավանդման մեթոդաբանությունների կատարելագործումն է: «ԱյբԼաբ»-երն ամբողջական լաբորատոր համալիրներ են՝ իրենց ուրույն տարածքային լուծումներով, կահավորանքի ու սարքավորումների համալրվածությամբ, հաղորդակցական և անվտանգության համակարգերով:

Այս նախագծի նպատակն այնպիսի ուսումնական միջավայրերի ստեղծումն է, որտեղ երեխային համակում է սովորելու, նորը ճանաչելու և արարելու ցանկությունը, որտեղ նա հնարավորություն է ունենում բացահայտելու իր ներուժը, փորձարկումներ և փոքրիկ հայտնագործություններ անելու, իր ապագա հաջողության հիմքերը դնելու:

«ԱյբԼաբ»-ով ստեղծվեց ժամանակակից առարկայական լաբորատորիայի օրինակելի մոդել, որը լայն տարածում գտավ «Այբ» կրթական հիմնադրամի ջանքերով ու ֆինանսական մասնակցությամբ և դարձավ Հայաստանի տարբեր դպրոցներում ներդրվող նոր առարկայական լաբորատորիաների համար նախատիպ:

ԱյբԼաբեր

Երևան
Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց
ֆիզիկայի և քիմիայի

Տավուշի մարզ, Բերդ
թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցներ
ինֆորմատիկայի

Վաղարշապատ
Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց
ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի

Քաջարան
թիվ 1 և թիվ 4 դպրոցներ
էկոլոգիայի

«Այբ» ընտանիքի դպրոցներ
4 բնագիտական «ԱյբԼաբ»-եր

Կրթաթոշակ լավագույն բուհերի ուսանողներին

2008-2022 թթ. հիմնադրամը կրթաթոշակ է տրամադրել նաև Հայաստանի և սփյուռքի ընդհանուր առմամբ 38 ուսանողի՝ աշխարհի առաջատար բուհերում նրանց ուսումնառությունն ապահովելու համար՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նպատակային նվիրատվությունների շնորհիվ:

Այս ծրագիրը հնարավորություն է ստեղծում «Այբ»-ի շրջանավարտների համար կրթությունը շարունակելու աշխարհի լավագույն բուհերում և ձեռք բերած գիտելիքները ծառայեցնելու հայրենիքին:

Ծրագրի արդյունքում կրթաթոշակներին ուղղված գումար՝ 1,5 մլն ԱՄՆ դոլար

Սերունդ առանց սահմանների

Գաղափարների մրցույթ

Կարևորելով համայնքային կամ սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված գաղափարներ ծնելու և կյանքի կոչելու հրամայականը՝ «Այբ» կրթական հիմնադրամը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի՝ ՄԱԶԾ-ի, և Դիլիջանի միջազգային դպրոցի (UWC) հետ համագործակցաբար իրականացրեց «Սերունդ առանց սահմանների» (Generation Unlimited, GenU) գաղափարների մրցույթը, որին մասնակցեց 12 թիմ՝ 50 երիտասարդներ Հայաստանի տարբեր մարզերից: GenU-ի համաշխարհային համագործակցության նպատակը 10-24 տարեկան երեխաների և երիտասարդների համար կրթության, վերապատրաստման և զբաղվածության ընդլայնված հնարավորություններ ստեղծելն էր:

Հայաստանյան մրցույթի հաղթող 5 թիմեր

- VR Lab
- CreActive
- Խոսք խոսքի
- Խեցեգործական գյուղ
- Հանուն փոփոխությունների

Եզրափակիչ մրցույթին ներկայացան 36 երկրներ, որոնց շարքում՝ Հայաստանը՝ «Խոսք խոսքի» և «Այբ» դպրոցի «VR Lab» թիմերով:

2022 թ. «Այբ»-ը կիրականացնի «Սերունդ առանց սահմանների» մրցույթի նոր ծրագիրը (Generation Unlimited Youth Challenge 3.0)՝ հնարավորություն տալով հայ երիտասարդներին նոր մտքեր ծնելու և հետաքրքիր լուծումներ առաջարկելու ամենատարբեր խնդիրների համար:

«Այբ» կրթական հիմնադրամը բազմաթիվ նախագծեր է իրականացնում, որոնք տարածում են կրթության միջոցով հաջողության հասնելու նորարար գաղափարներ ու նոր մշակույթ:

Հաջողության բանաձև

Հիմնադրամի նախագծերից մեկն է, վարպետության բաց դասերի և ելույթների հարթակ, որը հնարավորություն է տալիս ծանոթանալու հայտնի ու հաջողակ մարդկանց կյանքի փորձին: Այն այլընտրանքային կրթության ու նոր գիտելիքների, նոր գաղափարների ու ոգեշնչման հարթակ է: «Այբ»-ը վարպետության այս դասերն անցկացնում է 2009 թվականից, և մինչ օրս ունեցել ենք շուրջ 50 հանդիպում:

Մեղու մրցույթ

2021 թվականին առաջին անգամ «Մեղու» մրցույթն անցկացվեց նաև նոր՝ լրատվամիջոցներին հարմարեցված ձևաչափով: Նպատակն էր հայերենի հանդեպ հոգածությամբ համախմբել նաև լեզվի պահպանման ու տարածման մեջ կարևոր դեր ունեցող լրատվամիջոցներին:

«Մեդիաբըզզ» մրցույթի մասնակիցներ

- «Հետք» պարբերական
- «Արմենպրես» լրատվական գործակալություն
- «Մեդիամաքս» լրատվական ինտերնետ–պարբերական
- «Ազատություն» ռադիոկայան
- «Սպուտնիկ Արմենիա» գործակալություն
- «Առավոտ» օրաթերթ

Թիմերը խաղի երկու փուլերի ընթացքում մրցեցին հայերենի իրենց գիտելիքներով՝ ևս մեկ անգամ փաստելով մայրենի լեզվի ճիշտ կիրառության անհրաժեշտությունն ու այդ գործում լրատվամիջոցների կրթող դերը:

FORMATH

«Այբ» կրթական հիմնադրամը 2021 թ. առաջին անգամ անցկացրեց իր տեսակով եզակի ForMath մրցույթը՝ դնելով ֆոնդահայթայթման նոր և շատ կարևոր մշակույթի սկիզբը:

Մրցույթի մասնակից ութ առաջատար ընկերություններ

- Picsart
- Krisp
- Armenian Code Academy
- SoftConstruct
- PMI
- HiLearn
- Ameriabank
- ServiceTitan Armenia

Մրցույթի նպատակը «Քան» ակադեմիայի հայաստանյան հարթակի մաթեմատիկայի հայալեզու նյութերը հարստացնելն ու դրանց անվճար հասանելիությունն ապահովելու համար ռեսուրսներ հավաքելն էր: Գրանցման փուլում ստացված անդամավճարներն ամբողջությամբ ուղղվեցին «Քան» ակադեմիայի հարթակում ավագ դպրոցի մաթեմատիկական խնդիրների տեղայնացմանը: Այս նոր ձևաչափի շնորհիվ SS ընկերություններն իրենց համատեղ ներդրումն ունեցան Հայաստանում կրթական հնարավորությունների բազմապատկման մեջ:

Aybpod

«Այբ»-ը 2021-ին եթեր արձակեց կրթական փոդքաստների
իր առաջին հաղորդաշարը՝

«Այբփոդ»-ը

Ամիսը երկու անգամ մենք անդրադառնում ենք կրթության ոլորտին առնչվող որևէ թեմայի, քննարկում, վերլուծում, լսում փորձագետների, պատմում հաջողությունների ու նորարարությունների մասին, պատրաստվում առաջիկա մարտահրավերներին: Մենք խոսում ենք կրթական ամենակարևոր թեմաների մասին և օգնում դրանցով հետաքրքրված մարդկանց ձևավորելու իրենց որակյալ ձայնային տարածքը:

Սրանք 15 տարիների ընթացքում մեր իրականացրած մեծ ու նշանակալի ծրագրերն են, բայց «Այբ»-ի գործունեության ծավալն ու ազդեցությունը չեն սահմանափակվում միայն այսքանով:

«Այբ»-ն իրականացրել է նաև բազմաթիվ այլ հաջողված ծրագրեր՝

առարկայական խորացված դասընթացներ,
ամառային մեդիադպրոց,
MIT Open Courseware հայելային կայքի ներդրում
և այլն:

Սրանց միավորում է այբական հիմնական գաղափարը. ամուր պետություն ունենալու գաղտնիքը կրթության մեջ արված նպատակային ներդրումներն են և դրանց միջոցով կրթության սեփական ինքնաբավ մոդելի ստեղծումը:

Մեր 15-ամյա պատմությունը հարուստ է մարդկանցով: Մենք մեր ճանապարհն անցել ենք կրթությանը նվիրված, մեր գաղափարներն ու արժեքները գնահատող, սոցիալական բարձր պատասխանատվությամբ բացառիկ գործընկերների ու կազմակերպությունների հետ և բազմաթիվ հուշագրերով ամրագրել կրթությունը վերափոխելու մեր համատեղ ձգտումը:

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մեր գործընկերները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Տավուշի մարզպետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑՈՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆԱՅՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Cambridge Assessment International Education

AGBU

The U.S. Embassy in Armenia

From the People of Japan

UNDP

UWC

UCL Institute of Education

ENTERPRISE INCUBATOR FOUNDATION

WRO

GITELIQ CREATIVE FORUM

TUMO CENTER FOR CREATIVE TECHNOLOGIES

unicef 75

AUA American University of Armenia

Kangourou Sans Frontières

GTC

FAST

World Vision ՀԱՅԱՍՏԱՆ

PEOPLE IN NEED CZECH REPUBLIC

ԿՏԱԿ

Khan Academy

VTB

INNOPOLIS UNIVERSITY

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

QUALITY TESTING LAB

BUSINESS DEVELOPMENT GROUP

TEACH FOR ARMENIA

barry

skill

Creative Educational Technologies

ДОМ МОСКВЫ в Ереване

РОСАТОМ

ՖԱՐԻԿ ՀԵՆՑԵՐ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

АГЕНТСТВО ИННОВАЦИЙ ГОРОДА МОСКВЫ

LENTEX®

denovo sciences

PMI SCIENCE
PHILIP MORRIS INTERNATIONAL

PMA
Project Management Advisory

GALAXY
GROUP OF COMPANIES

media max

Telcell WALLET

ԱՐՄԵՆԻԱ

SOFICONSTRUCT

Rostelecom

STARTUP ARMENIA FOUNDATION

ConverseBank

U!com

PROFHOLOD

FLAG

AZAD

Թավրիզի հայոց ազգային «Թամարյան-Սահակյան» դպրոց

Luys Lnyu

Ռուսաստանի հայերի միության Կրասնոդարի երկրամասի կրթության բաժին

SOLARON
CONNECT TO THE SUN

LOFT

indigo

Uteach

OrganiX

DOUBLETREE
BY HILTON
YEREVAN CITY CENTRE

Best Western PLUS
CONGRESS HOTEL

YMMP

TRANSIMPEX

ZIGZAG

epigraph

ԶԱՆԳԱԿ ԳՐԱՏՈՒՆ

ԶԱՆԳԱԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԼՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

CITYZEN

MEGA TOYS

Գարուն by արդի սնունդ

VLUME

NAIRIAN

arloopa

Yeremyan ACADEMY

Shadowmatic

MACHANENTS HOUSE

DOLMAMA

Ankyun TALIAN HOME RESTAURANT

Sinatra RESTAURANT

BLIZZARD CATERING

gourоo club & garden

ARMAS

VOSKEVAZ WINERY Since 1952

Honeyam

MBG MARGARYAN BUSINESS GROUP

Louis Charden, Hans&Franz,
Alaska by Hans&Franz, Chinar,
Vostan by Tsirani ,Tsirani Home,
Tsirani Garden, White Hall by Tsirani

MUNICH

Մեր բարերարների ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ այստեղ

Ռազմավարական հովանավորներ

Դավիթ Յան

Մաթևոս Արամյան

Դավիթ Փախչանյան

Արթուր Ջանիբեկյան

Սերգեյ Համբարձումյան

Արժևորելով անցյալն ու կրթությունը դարձնելով բարձրագույն արժեք՝ մենք շարժվում ենք դեպի մեր գործունեության հաջորդ 15 տարիները:

Մեր բարերարների շարունակական նվիրատվություններն ու աջակցությունն են այբական ծրագրերի երկարակեցության և արդյունավետության երաշխիքը:

Մեր ծրագրերում կատարված անգամ ամենափոքր ներդրումն արդյունքի տեսքով վերադառնում է բոլորիս և մեր երկրին:

Շարունակենք միասին ստեղծել
լավագույն ապագան նոր սերունդների համար

donate.ayb.am